Հաստատում եմ՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի ղեկավար՝ **Ա.Կարապետյան**
(Պատվիրատուի ղեկավարի անուն ազգանուն)

( ստորագրություն)

**Արձանագրություն N 3**
«ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների մատակարարման)

ք. Երևան 10 հունվարի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| հանձնաժողովի | |
| նախագահ՝ | Ա.Գրիգորյան |
| քարտուղար՝ | Գ.Մելիքսեթյան |
| անդամներ՝ | Ա.Մկրտչյան, Գ.Սիմոնյան, Է.Հովսեփյան, Մ.Նազարյան |

**1.Որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

**1.** Սահմանված կարգով ստացվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը: **«Վաչական Ազարյան Արայի» Ա/Ձ ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն**, իսկ «Ռեաքիմ» ՍՊԸ-ի պատասխանը դրական է:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0*

**ա/ Գնահատող հանձնաժողովը որոշեց**

Հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման բացասական պատասխանը «Վաչական Ազարյան Արայի» Ա/Ձ-ի վերաբերյալ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ, 44-րդ և 45-րդ կետերի դրույթները՝ «Ռեաքիմ» ՍՊԸ-ն համարվում է **4-րդ և 11-րդ** չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրախ մասնակից և առաջարկվում է ներկայացնել 4-րդ և 11-րդ չափաբաժինների համար համապատախան որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

**բ/ Գնահատող հանձնաժողովը գնահատեց բավարար** 2-րդ, 3-րդ, 5-8-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ռեաքիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

**գ/ Գնահատող հանձնաժողովը որոշեց**

2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի պահանջները, 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից կպահանջվի համապատախան որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

**2. Գնահատող հանձնաժողովը որոշեց**

Կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ և 45-րդ կետերի դրույթները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

Հանձնաժողովի

Հանձնաժողովի

նախագահ՝ ____________________ Ա. Գրիգորյան

քարտուղար՝ ____________________ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ ____________________ Ա.Մկրտչյան

____________________ Գ. Սիմոնյան

____________________ Է.Հովսեփյան

---------------------------------------- Մ.Նազարյան